

ՎԼԱՍ ԿԱՌՆԻԱՑԻ

Կ Ա. Մ

Վ.Օ.ՏԱՆՈՒՆ ՍՊԱՆՈՂ ՄԱՆԿԱՆՑ

Վենետիկեան պատմական վէպ վելտասաներորդի դարուն

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Եջ մի 'ի պատմութենէ եւ դիւցազնի մը կարճեցիալ մահը



ԵՐՆԱՐԾ Լորետանի դքսութեան ժամանակ, յամին 1508, 'ի 10 գեկտեմբերի, գաշնազրութիւն մի հաստատեցաւ Քահանայապետին, կայսեր և Քաղղոյ ու Սպանիոյ թագաւորաց մէջ (որոց հետ միացան յետոյ նաև Սաւոյիոյ գուքսն, Խօթէի գուքսն և Մանդուայի մարգիզն), այն նշանաւոր գաշնազրութիւնն որ կոչուեցաւ Քամպրէի դաշն, գաշնազրութիւնն կնքուած տեղոյն անունէն իւր կոչումն ստահալով։

Այս գաշնազրութեան զօրութեամբ՝ պարուաորեալ էին օգնելու իրարու Յուլիոս Բ. Քահանայապետն, Մաքսիմիլիանոս Ա. Կայսրն, Լուգովիկոս ԺԲ. Գաղղոյ թագաւորն և Փերզինանդ Ե. Արակոնայի և Նախօլի թագաւորն, որպէս զի կարող լինին վերատին ձեռք բերել իրենց երկիրներուն այն մասունքը՝ որք կամ վաճառմամբ և կամ պատերազմական իրաւամբք վենետիկոյ Հաստրակապետութեան իշխանութեաններքեւ ինկեր էին, և որ ապօրինաւոր յափշտակուրիւն համարուեցաւ վերցյիշեալ դաշնաց հաստատման ժողովոյն մէջ։ Եւ որպէս զի աւելի ևս ատելի ընեն զշաստրակապետութիւնն ամենայն ազգաց առնե, նոյն ժողովքին մէջ վճռուեցաւ, որ եթէ վենետիկոյ վարչութիւնն օգնութիւն խնդրէ 'ի Պայալիսէ, որ նոյն ժամանակուան բովանդակ Ցանկաստանի Յուլցանն էր, վենետիկեցւոց գէմ կազմուած Դաշնակցութիւնն՝ իրբե անհաւատից գէմ հաստատուած համարուի։

Ուստի յամին 1509 'ի 16 ապրիլի, Գաղղոյ թագաւորն յետ վերակոչելու 'ի վենետիկոյ իւր գեսպանը, որ էր Յովհաննէս Լասկարի, միաձայն հաւանութեամբ միւս գաշնակից աշբութեանց, 'ի վենետիկոյ ուղարկեց իւր պատերազմական պատգամաւորաց գլխաւորն՝ Մոնֆորիի անուամբ, ծերակուտին գէմ պատերազմ՝ հրատարակելու, մէջ բերելով զանազան անհիմն պատճառանք՝ 1508 ամին 'ի 20 ապ-

րիմի կնքուած զինադադարումը ընդհատելու համար, (որ տեղի ու նկցեր էր Մաքսիմիլիանոսի պարտութենէն վերջը, երբ վենետիկեցւոց զէնքերն յաղթական գտնուեցան նաև կորիցիայի, Թրիեստի և Ֆիումէի պատերազմաց մէջ), զինադադարումն՝ որ երեք տարուան համար խնդրած և ստացած էր՝ ի վենետիկեցւոց յաղթեալ և խոնար. հեալ կայսրն Մաքսիմիլիանոս,

Հասարակապետութիւնն ամէն միջոց 'ի գործ դրաւ քիչ տաենի մէջ յանալով այսպիսի փոանգաւոր գաշնակցութիւն մը իրարմէ անջատելու, և հետեւաբար արիւնահեղութեանց առջեն առնելու. բայց յիտ ամենայն բանակցութեանց երբ տեսաւ որ անհնար է իր թշնամեաց խօսք հասկըցնել, գիմեց իւր արիութեան, իւր ազնուականաց հանճարոյն և իւր ժողովրդեան քաջասրտութեան. և ամէնկնալ միացան 'ի պաշտպանութիւն հայրենեաց:

Ուժ տարի տևեց այս այլետալի պատերազմն, և անհնարին է մի առ մի մանրամասնօրէն յիշել այն բազմաթիւ ճակատամարտներն, որք տեղի ունեցան այս արիւնահեղ և երկարատև կռուոյն մէջ. Մէկ մը միայն յիշենք, որովհետեւ նոյն մարտին մէջ մասն ունեցաւ այն անձանց մին՝ որ պիտի ծանօթանայ նուու այս մեր սկսած վիպասանութեան մէջ:

Վենետիկեան զէնքերն 1516 տարւոյն ընթացքին մէջ կը գտնուէին փատուայի պարապաց բոլորն, որ պաշտպանուած էր գաշնակցաց քանի մի լեգէտններէ, որոց գլուխ էր լէոնարտ Ֆրիսափիմոյ:

Վենետիկեցւոց բանակին առաջնորդն էր Անդրէաս Կրիթիի, որոյ հետ միացան նաև Գերգամացին Հերոնիմ Պոմպէոս Լակրանտիոս, Փէրուժիացին Վիթոլոյ, Պաւլոս Գոնդարինի, և այլք:

Հասնելով վենետիկեցիք փատուայի մօտ՝ բանակեցան Քօտա-լօնկա դրան կողմէ, որ պաշտպանուած էր 'ի փատուացւոց, որոց զինաւորն էր Կալէացցոյ Տիգրալցոյ, որ քիչ առաջ Ֆրիսափիմոյէն կանչուած մինելով թողուցեր էր դրան պաշտպանութիւնը իրեն զինուորաց ձեռքը:

Վենետիկեան զօրաց առաջնորդք՝ որպէս զի առանց զինուորաց կորստեան քաղաքին մէջ մոնեն՝ խորագիտական հնարք մը բանեցուցին, որով հասան իրենց նպատակին: Պատրաստեցին երեք մեծ խոտաբարձ կառքեր, և չորրորդ մալ նոյնպէս խոտաբարձ, որոյ մէջ զի նուորներ ծածկեցին, որը նախընթացաբար որոշուած նշանի մը ազդեցւն պէս՝ դուրս պիտի սասնուին, և յարձակման սկիզբն տային Առաջին երեք կառքերն, որոց ետեէն կ'երթար նաև չորրորդն՝ առաջնորդեալ քանի մը գեղացիներէ՝ հասան դրան առջև:

Գեղացիներն վկայեցին որ այն խոտը քաղաքացւոց մէկուն կը պատկանէր, ուստի և պահապանէր խարուելով դաները բացին և երեք կառքերը ներս մոտան: Հազիւ թէ չորրորդ կառքն ալ ներս մոտաւ,

և ահա արուեստական կերպով խորտակուեցաւ . դուրս ցաքտեցին ծածկուած զինուորներն, և ինչպէս կամխաւ հաստատեր էին՝ քաղքին մէջ մատան՝ վենետիկոյ պատերազմական Սան Մարքոյ, Սան Մարքոյ խրախուսանաց աղաղակով : Այս նշանը տրուելուն պէս՝ հոն զիմեցին մէկէն ոչ միայն պարսպէն գուրս պահուըտած զինուորներն, այլ նաև Փարմայի զբանը ընտանեաց վերաբերող երկու եղբարփ իրենց կուսակցոք, որոնք քաղաքին մէջ մնացեր էին, և միշտ հաւատարիմ գտնուեր էին Հաստակապետութեան :

Թշնամեաց կողմէն Լէռնարտ Ֆրիսսիմոյ, Պրունօրո Տա Սէրէկոյ վերոնացին և այլք, Հետևակօք և 200 հեծելք դիմեցին վենետիկեան զօրուն վրայ և սկսան կրակ տեղալ: Թէպէտ և քայլութեամբ դէմ դնել ջանացին կայսերականք, այլ այսուհանդերձ ստիպուեցան տեղի առաջ յարձակողաց, և ապաւինիլ ներքնաբերդին մէջ, ուր սկսան պատրաստուիլ իրենք զիրենք պաշտպանելու, բայց առանց յոյս ունենալու որ երկար ատեն կարենան զիմնալ, որովհետեւ զուրկ էին ՚ի պարենից և ՚ի կարենորաց պատերազմական զինուց :

Այս առաջին յարձակման մէջ վենետիկեցւոց ձեռքը գերի ինկան Պրունօրո Տա Սէրէկոյ և այլ կայսերականաց կուսակիցք :

Այս յաղթութիւնս կատարուած ժամանակ՝ քաղաքին միւս կողմէն որ Փօրիքէլլօ (Դռնակ) անունն կը կրէ, կը հասնէր նիկողոս Փասքուալիկոյ շատ մը նաևերով՝ Հասարակապետութեան հետևակազօրուն յօգնութիւն գալով . ուստի կրիթթի տեսնելով որ նորանոր ոյժերով զօրացաւ, մտածեց յարձակումն ընելու ներքնաբերդին վրայ անմիջապէս հետևեալ օրը, ուր ինչպէս վերն ըսինք, ապաւինած էին կայսերական զօրքերն . այս նպատակաւ ամրականաց որ եիցէ փախրս, տեան միջոց խափանեց, յաղթութիւնն ապահովելու համար : Եօթը թնդանօթ զետեղեց՝ միշնաբերգը գնդակակոծելու համար . և զինուորները այնպիսի կերպով դասաւորեց՝ որ կարենապին մէկէն յարձկիլ բերդին վրայ՝ այնինչ հրանօթներն սկսէին խորտակել բերդին ահաւոր ամրութեամբ կավմուած պարիսպներն, որոց մէջ նոյնպէս իրենք զիրենք պաշտպանելու համար պատրաստութիւններ՝ ՚ի գործ կը դնէին Ֆրիսսիմոյ և իւր ընկերակիցներն : Առաւոտուն գէմ՝ նշան տրուածին պէս՝ վենետիկեան հրանօթք սկսան հուր տեղալ բերդին վրայ, որոց կը պատախանէին թշնամէոյն հրազէնքնն Բայց վենետիկեան թնդանօթք՝ ճարտար և արի ուղղիներէ գործածուելով՝ քիչ ատենի մէջ պարիսպներէն մասն մի տապալեցին, և խրամատ մը բացին բերդին մէջ մտնելու . ուսկից ներս յարձկեցան խուսն բազմութեամբ հետևակ զինուորներն, որոց կ'առաջնորդէր կրիթթի, և սկսան յարձակմունք ընել գէպ ՚ի վեր :

Պատերազմին սաստկացած ժամանակ, երբ յարձակովք ամէն ընդդիմութեանց յաղթելով՝ ներս կը մտնէին բերդին մէջ, գետնշն

վրայ տարածուած թողլով բազմաթիւ մեռեալ և վիրաւորներ, հետեւակազօրուն մէջէն արիասիրտ մէկ մը, որ ամենէն առաջ քաջութեամբ բերդին խարիսալեալ պարսպաց վրայ ելեր էր՝ հոն Հասարակապեսութեան դրոշը կանգնելու՝ 'ի նշան յաղթութեան, ինկաւ վերէն վար՝ կուրծքին թշնամնոյն գնդակ մ'ընդունելով, յաղթական դրոշը դեռ ևս ձեռքին մէջ սեղմելով:

Շուտով մը իւր ընկերներէն վերցուելով կիսամեռ պատերազմի տեղէն հեռի տարուեցաւ, և յանձնուեցաւ սիրալիր հոգատարութեան դիրութեան-թերց, որք լի դորովով և անձնանուիրութեամբ այնպիսի ահաւոր վայրկեաններու մէջ կ'օգնեն և կը խնամեն զվիրաւորս:

Վիրաւորեալն երեսունուերկու կամ'երեսունուերեք տարուան մարդ մ'էր, զինուրական դիմօք, պղնձագոյն երեսով և պնդացած ձեռօք, որք յայտնապէս կը ցուցընէին որ ժողովրդական դասուն կը պատկանէր, այն ժողովրդեան՝ որ միշտ պատրաստ էր դիմել նախ քան զամեննեսին 'ի վրկութիւն հայրեննեաց, երբ որ և իցէ սպառնալիք վերահաս տեսնէր 'ի վտանգ իւր երկրին:

Օրիորդ քոյր մը նախնական նպաստները կը մատուցանէր իրեն, սպասելով զվիրաւորեալս կրող կառաց. և մինչդեռ ծանր վերքը կը պատէր՝ հոգեվարն նուազ կերպով բանալով իւր աշքերը (որք կարծես մահու խաւարային վարագուրաւ ծածկուեր էին) տկար ձայնով մը ջուր խնդրեց: Քոյրը փութաց եղկելոյն փափաքը կատարելու, որ գառնալով իրեն՝ ըսաւ.

— Քոյր, իմ վէրբա մահացու է. քանի մը վայրկենի միայն կեանք ունիմ: ինդրեմ մտիկ ըրէ, կարսոր իրեր ունիմ քեզ հաղորդելու:

— Խօսէ, եղբայր, պատասխաննց Քոյրն, ըայց զքեզ շատ մի յոգ-նեցըներ. քու վէրքդ շիներեր քեզ զայն:

— Կարծ պիտի կապեմ ըսելիքս, որովհետեւ մահը ինծի մօտ կը աեսնեմ: Ես կը կոչուիմ Գէորգ Տօլֆին, և 'ի վէնետիկ՝ ուր ծնած եմ; Ժողովցի իսեղճ կին՝ զարգացեալ յլութեան վիճակի մէջ: Ես զինքն այլ ևս պիտի շտեսնեմ: և ոչ այլ ևս հնար պիտի լինի ինձ մեր սիրոյն մի միայն պտուղը տեսնելու: Կ'աղաշեմ զքեզ, ով Քոյր, հասցընելու այն եղկելոյն զգեստիս գրպանին մէջ գտնուած թղթերը, և բանց տալու իրեն իմ մահս: Բայց իրեն որ իմ վերջին մոտածութիւններս, իմ վերջին հառաջանքներս եղան իրեն համար.... իմ հայրենեացս հս մար.... շնորհնաս.... Քոյր.... կը խնդրեմ.... ես կը մեռ... նիմ.... Այս խօսքերովս խոնարհեցուց զլուխը և գոցեց աշքերը:

Քոյրը՝ կարծելով մէկ մեռաւ, զեղկելին խոսին վրայ զետեղեց, վրան գոցելով հոն գտնուած ծածկոյթով մը. հանեց անոր զրպանէն յանձնարարուած թղթերն. աղօժեց եռանդեամբ առ Աստուած խեղճ զինուորին հոգւցին համար, և գնաց ուրիշ թշուառներու նոյն զմութեան օգնութիւնը շնորհելու:

Արդէն երեկոյեան գէմվենետկեան զէնքերն տիրեր էին բերդին պարսպաց. բերդին իշխելով՝ գերի 'ի վենետիկ զրկեր էին զէննարտ ֆրիսիմոյ, զիմանֆրէտո ֆաշիօրո և ուրիշ կուսակիցներ, որք իբրև ապստամբը՝ տարուեցան Դքսական Պալատին բանտերը:

Յետ 42 աւուրց արիւնահեղ պատերազմներու, հուսկ ուրեմն Փատուա քաղաքն վենետկեցւոց զօրութեան ներքն ընկճուեցաւ: Այս յաղթութիւնս բարեբախտ գուշակութիւն մ"եղաւ ուրիշ մեծամեծ յաղթութեանց. և կրնայ ըսուկի որ այն ժամանակէն 'ի վեր վենետիկոյ բախտն յաջողեցաւ. որովհետի այս պատերազմն թուլացուց և անկարող ըրաւ փամպրէի. մէջ կնքուած տհաւոր գաշնակցութիւնն, և վառեց արծարծեց վերստին զշիշեալ յոյս վենետկեան Հասարակա-պետութեան:

Գ Լ Ո Ւ Խ Ե Բ Կ Բ Ո Ր Դ

Դարմանոց ընկեցիկ տղայոց

Նախընթաց զլիսոյն մէջ պատմած գէպքերն! ս գրեթէ չորս ամիս վերջը՝ բավանդակ վենետիկեան Հասարակապետութիւնն ուրախութեան մէջ կը ցնծար՝ Փատուայի քով կայսերականաց գէմ ստացած յաղթութեան համար, ինչպէս նաև ոչինչ նուազ փառաւոր յաղթանակաց համար, որք տեղի ունեցեր էին վիշենցայի, Պէլլունի և Ֆէլթրէի մօտերը. ուստի և խաղաղութեան վերահաստատուելուն մեծ յոյս ունէին: Բայց Մովսիմիլիանոս կայսեր չափազանց պահանջներն պատճառ եղան խաղաղութեան Հասատատուելուն, որով վերջանային պիտի արիւնահեղ պատերազմունք. ուստի կոուին շարունակուելուն վրայ գես խօսք կար:

Մինչդեռ վենետիկոյ ծերակուտին խորհրդարանին մէջ կը մուածուէր բանելիք ուղղութեան վրայ և 'ի հշիս կ'առնուէր զինուորական առաջնորդաց խորին գիտութիւնն և հանճարն, և ցամաքի ու ծովուզինուորաց յաջող ելիւք սկսած պատերազմը յառաջ տանելուն վրայ, տան մը մէջ, մանաւանդ թէ ճշգագոյն ըսելու համար՝ խզեկի մը մէջ, ուր օգոյ, լուսոյ և կենաց կարեռագոյն իրաց պակասութիւնն ակնյացտնի էր, գեռահաս կին մը՝ որոյ ճակատին վերաց թշուառութիւնք ժամանակէն առաջ խորշումներ ձեւացուցեր էին, խեղճուկ խշտեկի մը վրայ պառկած, տղաբերի ցաւերէ կը տագնապէր: Քանի մը զրացի կանանց զթարսութեամբ և գենովափէ անուամբ բարի պառւէր մը խնամքով, որ գայեւակ եղաւ խեղճ տղաբերի մէջ եղողին, այսպիսի պարագայի մը մէջ անհրաժեշտ կարեւոր եղած բաները մատակարարուեցան. և սակաւ ինչ զրամով որ ժողովուած էր 'ի դրացեաց

ծննդական կնոջ նախընթացաբարը ըրած խնայութիւններէն, գնուած էր ինչ որ կարևոր էր այնպիսի թշուաւ վիճակի մը մէջ զանուսպի մը աննդեան համար :

Այսպիսի աղքատին ողորմելի վիճակի մէջ զիկտորինէ (այս էր ծընընդական կնոջ անունը) ծնաւ մանչ զաւակ մը, որ ողջունեց առաջին լացով այս արտասուաց և գժրախտութեանց հովիտը, զոր մենք աշխարհ անուամբ կը ճանանանք :

Մոյրը համբուրեց գգուանգը զնորածին մանուկն. բայց հազիւթէ այն առաջին ուրախութեան կիրքն հանդարտեցաւ, խորին հառաջանք մը հանեց սրտէն, և որդւոյն նայելով (զոր առաւ գենովափէ անոր գրկէն՝ սկզբնական կարևոր խնամքներն՝ ի գործ դնելու համար), բաւաւ.

— Խեղմ մանկիկ, երբ որ մեծնաս և հօրդ վրայօք տեղեկութիւն ուզես, ո՞հ, պիտի ըսեմ ուրեմն որ զքեզ աշխարհք բերելիս առաջ մեռաւ . . . Որբ 'ի հօրէ՝ զեռ չձնած, պիտի մեծնաս նաև հեռի 'ի մօրէգ, որ անկարող 'ի հիւանդութենէ և 'ի թշուառութենէ՝ քեզի կարեոր մնունդ մատակարարելու, բռնադտաել է զքեզ գմութեան դարմանոցին յանձնելու . . . Ո՞հ, գենովափէ, ախ, մրչափ թշուառ եմ ես, բաւ յետոյ գառնալով առ պառուն, որ զտղան բալուը ած էր. միթէ չէր կրնար Աստուած այս աշխարհէս զիս ազատելու, ինչպէս ազատեց իմ խեղմ Գէրզոս:

— Հանգիստ կեցիր, սիրելի վիկտորինէ, պատասխանեց պառաւն. քու վիճակդ չի ներեր որ այդպէս գուն զքեզ չարշարես: Հիւանդ ես և հանդշելու կարօտ. և թէ որ փոխանակ հանդշելու (որուն այն չափ պէտք ունիս քու հիւանդութեանդ և տղաբերքի հետեանք յաւոցդ, յաղթելու համար) դու զքեզ նեղես այսպիսի դառն և տիսուր մոտած մնանքներով, Աստուած չընէ, բոլորովին որբացեալ և միայնակ պիտի թողուս երկրիս վրայ այս ինքն անմեղուկը, որով և ոչ իսկ իր մայլը ճանչցած լինելու միխմարտինն պիտի ունենայ եղկելին, մինչես երկինք զուրի թողին զինքն 'ի հօրէ՝ դեռ աշխարհք չեկած:

— Բայց, չես կրնար երեւակոյել թէ մրչափ մեծ է սրտիս կակիծը երբ կը տեսնեմ թէ պէտք է հեռացընեմ ինձմէ իմ որդիս, և զրկեմ Ընկեցիկ մանկանց մէջ խտոնելով զինքն այսպէս այն պոռնըկորդւոց բազմութեան հետ:

— Է՛հ, ուրիշ ինչ կրնաս ընել, պատասխանեց գենովափէ. դուն չես կրնար կամի տալ, և ոչ դժբախտաբար զինքը ստնտուի մը յանձնելու միջոցներն ունինք: Թէ որ մեր բարի դրացուհիներէն մէկը կամ մրւաը կաթնտու լինէր, կրնայինք խնդրել որ բռ որդւոյդ ալ այս չնորհքն ընէր, բայց չկայ մէկն այդպիսի վիճակի մէջ: Աւստի հարկ է համաւ կամիլ Նախարարնամնութեան կարգադրութեան հետ, և թողուլ որ այս զիշեր տղան դարմանոցը տանիմ:

— Դուն մայր չես, գենովափէ, և այս պատճառաւ է որ այդպէս կը խօսիս առ իս:

— Մանաւանդ թէ ինքզինքս քու կաշւոյդ ներքե կը դնեմ. բոյց միւս կողմանէ պէտք է ուզենք չուզենք արիանանք և յարմարինք պարագաներուն: — Նայէ, հիմա քեզի արգանակ մը և ապուր մը կը պատրաստամ զրտա պիտի ուտես:

— Անօթի չեմ, գենովափէ, ջերմէ կ'այրիմ, և դժբախտաբար կը տեսնեմ որ առողջանալու համար պէտք է հիւանդանոց երթամ: Զմեզ աղքատներս վերի վերանց կը հոգան բժիշներն. հոն գէթ վրաս խնտքը կը լինի, և զքեզ ալ, բարի գենովափէ, ազատած կը լինիմ այս կերպով այնչափ առ քեզ տուած նեղութիւններէս . . . Ո՞հ, որ շափ պարտտկան եմքեզի, գենովափէ . . . ըստ հիւանդն՝ սեղմելով սրտին վրայ զտղան, որ սկսեր էր քնանալ:

— Ի՞նչ բաներ կը սես, ըստ պառաւ դայեափն, անոր առջեը զընելով արգանակի սկսուտեղն, զոր փոքրիկ կաթսայի մը մէջէն տուաւ, որ գրուած էր վառարանի մը վրայ նոյն խուցին անկիւնը, որ թէ խո, հանոցի և թէ միանգամայն անկողնոց սենեկի տեղ էր վիճատրինէի համար: — Թէ որ հիւանդանոց երթալ կ'ուզես, շարունակեց պառաւն, ուզած զըրէ: բայց իբրև թէ ինձի նեղութիւն կու տաս՝ այս փոքրիկ աշխատանաց համար՝ զոր կրցածիս չափ կ'ընեմ, և ոչ իսկ խոսք ըրէ: Մեր բարի բժիշկը օրուան մէջ երեք անգամքեզի այցելութեան կու գայ, զոր սովորաբար ուրիշի համար չըներ. բայց հիմա որ այնչափ յաճախ չի գար՝ նշան է որ հիւանդութիւնդ այնքան ծանր չէ, ուստի իրեն սովորական այցելութիւնն բաւական համարած պիտի լինի: Դու հանգելէն զատ ուրիշ բանի պէտք շանիս:

— Գրեթէ երեսուներկու կամ երեսուներեք օր է որ անկողին կենալու եմ բոնաբառուած, և ամենսկին զէպ՝ ի լուն չեմ երթար. խիստ ակարացեր եմ և անընդհատ չերմ ունիմ:

Պիտի տեսնես որ հիմա՝ ծնանելէդ վերջը՝ հիւանդութիւնդ ուրիշ ընթացք մը պիտի առնու: Այս բանս շըսան նուի քու Անճելիքա զ բացիդ, թէ մինչեռ ուզեղային արեան յորդութիւն ունէր, մէկէն երկունքն անցնելէն վերջը հանգստացաւ. Սատանան, կ'ըսեն, ամէն անգամ կարծուածին չափ տգեղ չէ, և թէ որ ըստածներուս մտիկ ընեա՛ շատ պիտի չուշանաս առողջանալու ընթացից մէջ մտնելու: Բայց պէտք է զքեզ հանգիստ բռնես, և անցած զնացածին վրայ շմտած ես:

— Խեղճ գէորդ, հառաւեց հիւանդն, ծաղիկ հասակի մէջ մեռնիլ: Անէծք անոնց որ այս ձախորդ պատերազմը զրգուեցին. անոնց պատճառաւ էրիկս ստիպուեցաւ բանակն երթալու, ուր իրեն պարտուց և քաջութեան զոհ եղաւ:

— Այնպէս չէ, Փատուայէն իրեն մահուան գոյմն ստացար, հարցուց գենովափէ:

— Մեռնելէն առաջ գէորդ իր թղթապանակն յանձներ է եղեր վերջի վայրի եաններուն մէջ իրեն խնամք տանող Քրոջը, և այն ծրարին ինծի բերողն՝ այս պատմութիւնը պատմեց. ինքն ալ լած էր այն մայրապետէն՝ որ մեկնած է եղեր բանակին հետ միատեղ դէպ'ի Վիշենցա, որ մինչդեռ գէորդ պարտեալ դղեկին պարսպաց վայ Հասարակապետութեան դրօշը կանգնելու վրայ է եղեր թշնամոյն գնուուկ մը սրտին է եկեր իրեն վերջին մոռամունքն իմ և այս անմեղուկ մանկան վրայ է եղեր, զոր ես այն ատեն յարգանդիս կը կրէի :

— Խնդ գէորդ, ըստ գենովափէ, թեին զգեստովը արցունքը սրբելսվ։ — Բայց դադրեցնելոք այս խօսակցութիւնս, սիրելի Վիկ. տորինէ, ըստու յետոյ, տեսնելով որ խեղճ կինը լալ սկսաւ։ — Հիմա դուն ինծի այն ըսէ թէ Բնշ նշաններ կ'ուզես գնել որպէս զի օր մը կարենանք ճանշնալ տղան և Գարմանոցէն հանել. իը տեսնես որ գիշերը վրայ կը համնի, և խեղճ տղան չի կրնար երկար ժամանակ առանց կաթի մնալ։

— Իրաւ. է, գենովափէ, ըստու Վիկտորինէ, հանելսվ օղ մը ականջներէն. ահաւասիկ. Կտպէ այս օղս բալուլին վրայ, և անկողնոյս քով կախուած արցոյէ միտան, որ խեղճ գէորդիս յիշատակն է, վիզն անցուր: Բաց գարձեալ այն մնատուկը, ըստու յետոյ ցուցընելով գրաւեղանի մը պէս դարան մը, որ ցեցակեր եղած՝ հազի կանգուն կը կենար՝ միայն երեք սոտքերու վրայ, հօն պիտի գտնես կապ մը, որուն երկու ծայրերը իմ անուանս վ. Տ. նշանազրերը բանուած են. կէս կտրէ զայն, մէկն ինծի տուր, և միւտովը կապէ զաղան. և Արք որ յարմար դատիւ տար զինքն ՚ի Գարմանոց . . . Ասսուած և այն գըթասիրա Քարքն թշուառ տղուս վրան խնամք կ'ունենան :

Գենովափէ Վիկտորինէի ամէն պատուիրածներն ըրաւ. և սպասելով որ միննար՝ տղան Գարմանոց ատնելու համար, հիւանդին ապուր և քիչ մը արգանակ պատրաստեց, մի և նոյն ժամանակ կարգի գնելով աղքատիկ անկողնոյն վարագուրները, և այն նկուզի նման բնուկարանին մէջ եղած քանի մը կտոր կահկարասիքը, բնակարան մը՝ ուր չի կրնար ենթագրութիւն կազէս կարող է ապրիլ մարգկային ստեղծուած մը, և մանաւանդ այնպիսի հիւանդագին վիճակի մէջ:

Վիկտորինէ որուն Ներմոնթիւնն գիշերուան դէմ աւելի կը սաստ կանար, կամաց կամաց քնացաւ, իրեն մօս ունենալով իւր Փոքրիկ որդեկիկն, զոր գժբախտաբար այլ ևս պիտի չտեսնէր:

Ինչպէս որ դիւրաւ գուշակած պիտի լինին մեր ընթերցողք, այս թշուառն՝ կին էր այն քաջասիրտ գէորդ Տօլֆին զինուորին, զոր նախընթեաց գիշայն մէջ ֆատուայի պարսպաց ներքէ ինկած տեսանք, և զոր մայրապետն խոտին վրայ տարածուած թողուց, որպէս զի դիակիր կառքն շրջան ըրած ժամանակ զինքն ալ առնէ վեցընէ:

Երկու տարիէ ՚ի վեր էր որ գէորդ ամուսնացած էր Վիկտորինէի

Հետ, որ զուրկ էր 'ի ծնողաց, և իր չափաւոր աշխատանաց արդեամբք կ'ապրէր, դերձակութիւն կ'ընէր, և դէսրգի հետ ամուսնացած ժամանակ քիչ մը բան խնայութեամբ մէկդի գրած էր: իւր էրի կը, որ արուստիւ կոտք շինող էր, յետ իրեն հետ ամուսնանալու՝ շուզեց որ վիկուրինէ դերձակութեան գործը առաջ տանի, այլ միայն տնական իրաց զրազի: Ամուսնութենէն քանի մ"ամիս վերջը, խեղճ վիկուրինէն հիւանդացաւ, և ստիպուեցաւ քանի մը շարաթ անկողին մնալու: Եւ երբ բժշկին անընդհատ խնամօր առողջանալու վրայ էր, գէորգ անիրաւ պատերազմին պատճառաւ: ստիպուեցաւ բանակ երթալու, ցաւոց և աղջուտութեան մէջ թողով իւր սիրելի հարար, որ քանի մը ամսէ 'ի վեր յդի կը գտնուէր:

Ի սկզբան անդ մինակ մնացած ժամանակ վիկուրինէ ապրեցաւ այն քիչ մը պաշարով զոր էրիկն թողուցեր էր իրեն. բայց շուապվ ստիպուեցաւ ձեռք զարնելու իր նախկին դերձակութեան արուետին՝ իրեն կեանքը պահպանելու համար: Քանի մը շարաթ անդադար զիշեր ցորեկ աշխատեցաւ, բայց այնպիսի ծանր աշխատութիւն մը իր հիւանդու կազմուածքը չէր ներեր. ուստի դարձեալ կորսնցընել սկսաւ իր առողջութիւնը օր ըստ օրէ, այնչափ որ հարկ եղաւ աշխատելէ զադրիլ: Խնայութեամբ քիչ մը մէկդի գրածը սպառելէն յետոյ, սկսու ծախել կամ զրաւի դնել իր սակաւ զգեսաներն. և հուսկ ուրբմի հարկադրուեցաւ նաև կահկարասին ալ զրկուելու և ինկնալու այն խեղճ վիճակին մէջ, զոր 'ի վերոյ նկարագրեցինք: Դիմեց նաև առ իւր մի միակ ազգականն, որ էր մօրեղբայրն, հարուստ վաշխառու. բայց կին մը՝ որ իրբեն հոգաբարձու տան՝ անոր հետ կը բնակէր, և որուն ձեռքով միայն հնար էր անոր քով երթաւ, հասկըցուց իրեն որ մօրեղբայրն աղքատ ազգականաց հետ վերաբերութեան մսնել բնաւ յանձն չառնուր:

Ճնշեալ 'ի հիւանդութենէ և մօտ տղաբերքի, վիկուրինէ ստիպուեցաւ թողլու այն տունը՝ ուր էրկանը հետ վարձքով բնակեր էր, գտնելու համար իրեն այն խարխլած նկուղն, ուր զինքն 'ի քուն տեսանք իր որդեկին մօտ այնպիսի թշուառութեան մէջ, հիւանդ, և արտաքուստ առանց այլ ինչ օգնութեան, բաց 'ի զթասիրտ գենովափէի ցոյց տուած խնամքէն:

Մինչեւո բարեսիրտ գենովափէն՝ որպէս զի խնայէ մօրը այն յուսահատ կոկիծը զոր պիտի ունենար իւր որդիէն բաժնուած վայրկենին, կը սպասէր որ մայրը խորքնոյ մէջ ընկղմի, որով և ինքը զողան Ընկեցիկ Մանկանց Գարմանոցը տանի, և հօն զետեղէ զինքն այն լեւոյն մէջ որ այդ անմեղին նման շատեր ընդուներ է, վիկուրինէի բնակարանին մերձակայ փողոցը քանի մը կանաքը՝ իւրաքանչիւրն իրենց տանը դրան առջն նստած էին, ըստ սովորութեան ոմանց ումանց ռամիկ ժողովրդենէն (և մանաւանդ քաղաքին ներքսագոյն կողմերը)

որ աշնան եղանակին երեկոյեան դէմշունչ առնելու կ'ելքն դրանց առջև . այս կանուք նստեր կը խօսակցէին իրարու հետ, և իրենց խօսակցութեան նիւթն ալ նոյն ինքն մերձակայ դրացուհւոյն տղա-բերքին և հիւանդութեան վրայ էր :

— Խեզգ մանկամարդ, ըսաւ այն ռամկուհիներէն մին, իրաւ որ դժբախտ է . չկարենալով կաթ տալ տղուն, պիտի զրկէ զինոքը Ընկե. ցիկ Մանկանց Դարձմանոցը :

— Իրաւ կ'ըսես, Ըննիկ, խեզգ վիկտորինէ :

— Ինծի քիչ մ'առաջ այս բանս հաջորդեց գինովափէ, այն պա-ռաւն՝ որ այնքոն խնամքով զինքը կը հոգայ :

— Իրեն ազգական է, հարցուց գէր սանամայր մը, որ քիչ առաջ հասեր և աթոռը Ըննիկին մօտ գնելով նստելու կը պատրաստուէր :

— Կարծեմ թէ չէ, պատախաննեց հարցուողն :

— Վիկտորինէ անգամ մ'ինծի ըսաւ որ այն պառաւն իրեն ստրն-տուն եղած էր, ըսաւ ուրիշ կին մը՝ որ հեռուէն մափկ ըրած էր ա-նոնց խօսակցութիւնը :

— Ինչպէս մայր մը իր աղջրկան վրայ խնամք կը տանի, այնպէս ալ այն պառաւն վիկտորինէ վրայ, ըսաւ առաջինն :

— Բայց լսած եմ որ վիկտորինէ շատ հարուստ մօրեղբայր մ'ունի եղեր. ինչո՞ւ համար անկից օգնութիւն խնդրելու չի դիմեր, ըսաւ գէր սանամայրն, որ փուքի մը նման չուն, առնելով և տալով իր մարմնոյն յոյրութեան պատճառաւ, գոգնոցով կը հովահարէր ինքզինքն :

— Իրաւ է, Ծանծէ, ըսաւ Ըննիկ, բայց պէտք է գիտնաս որ վիկ-տորինէի մօրեղբայրն գարշելի վաշխտառ մ' է, ըստ որում լսեր եմ մեր գրացի սափրիչէն, և թէ հարիւրչեսկ մ'անգամ չի տար իր աղքատ ազգականաց՝ եթէ զանոնկ անօթութենէ մեռնելու մէջ ալ տեսնէ :

— Գիտես ովէ, հարցուց Ըննիկի գրացին, այդ ահաւելի անպիտանն, այդ արիւնարրու մարդասպանը, որ այն զգուելի նկուղին մէջ կը թողու որ փոտի իւր աղքականն՝ ծանր հիւանդութեամբ տագնա-պեալ, մինչդեռ ինքը ոսկեոյ մէջ կը լողայ :

— Ինծի անունն ալ ըսին, բայց հիմա միտքս չի գար :

— Ե՞ն, իրաւընէ, վրայ բերաւ Ծանծէ հեգնական ձայնով, ինչ-պէս կ'ուզէք որ այդպիսի հարուստ պարոն մը, այդ քու նկարագրա-ծիդ. համեմատ մօրեղբայր մը, կարենայ յիշել իր աղքատ ազգա-կանն : Գամ գրամի քով կը կենայ և ոջիկն ոջի հետ : Թէ որ վիկտորի-նէ իրեն նման հարուստ լինէր, պիտի տեսնէիք որ ամէն օր այցելու-թեան պիտի գար անոր, առանց վախի կօշիկներն ազտոտելու :

— Իրաւունք ունիս, Ծանծէ, աւելցուց ուրիշ կնիկ մը, աղքատին սանդուղներն տեսակ մը մարդկանց համար շինուած չեն . կը վախեն որ անոնց աղտոտութիւններով իրենց չքեղ պալատանց մարմարեայ սանդղամատունքը բժաւորեն :

— Բաց ասկէ, ինչ յոյս կրնայ ունեցուիլ աղգականներէ, թէ հարուստ եղեր են թէ աղքատ . երբոր թշուառութիւնը մէկուն դուռը մօտենայ, ամէնքն ալ կը փախչին անկէ, ինչպէս սատանան օրհնած ջրէն, ըստ պառաւ մը, որ իր դրան շեմին վրայ նստած՝ դուրպայ կը հրւսէր :

— Ըստածդ իրաւ է, Մագգաղինէ . Աստուծոյ աղօթք պէտք է ընենք որ զմեղ առողջ պահէ քնաւ մէկու մը կարօտութիւն չունենալու համար : Միշտ այսպէս եղած է . թէ որ դրամ ունենաս՝ ամէնքը ետևէդ կը վաղեն, և աղգականացդ ու բարեկամացդ թենիամինն ես . իսկ թէ ընդհակառակն թշուառութեան մէջ գտնուիս, մարդ մը չես դաներ որ քեզի օդնէ . բախեցէր և քացցի ձեզ, կ'ըսեն քահանայք . բայց երբ որ զժբախտաբար ստիպուեցայ 'ի կարօտութենէ հազարումէկ աղգականաց և բարեկամաց գռները զարնելու, այն հազարումէկ գռներն երես 'ի վեր գոցուեցան՝ հանդերձ արհամարհանօք : Է՛հ, սիրելի դրացուհիք, ես պառուած եմ, և երկար ժամանակէ 'ի վեր զաշխարհս կը ճանչեմ : Քանի որ ամանին մէջ մեղր գտնուի, ճանճերն անդադար չորս կողմը կը պատրին . մեղրը լմննայ՝ ճանճերն ալ կը թռչին կ'երթան . և այսպէս պիտի լինի յարիտեան յարիտենից

— Ամեն, ըսին միաբերան միւս կանայք . որք աղու պղպղով լաւ համեմուած գտան իրենց դրացուհոյն պարդամիտ գիտութիւնը :

Այս կէտին հասած էր անոնց խօսակցութիւնն, երբ փողոցին մէկ ծայրէն դուրս ցցուած տեսնուեցաւ 60-65 տարեկան պառաւի մը շիտակ քիթն, չորցած զէմքով, փոսցած փոքրիկ աշքերով, տիկնոջ մը պէս հագուած և զգեստին գօաւոյն վրայէն կախուած կրելով փոքրիկ վարդարան մը : Քաջ զիմագէտ մը՝ խօրշոմերով գիծ գիծ եղած այն մոխրագոյն երեսին վրայ՝ շուտ մը առանց տարակուսանաց՝ պիտի կարդար կեղծաւորի մը ճշգրիտ նկարագիրը :

— Ժամը ութն է, հարցուց այն ատեն իրեն մօտ գտնուողին՝ այն կանանցմէ մին :

— Ի՞նչ բան կայ որ կը հարցընես, պատախանեց միւսն :

— Չես տեսներ . երբոր Այիզեսատրա տիկինն կ'անցնի՝ վարդարանի աղօթքին երթալու համար, թէ որ ութը զարկած չէ՝ զարնելու վրայ է :

Հարուսակելի

